

Հավելված
հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2022թ. մայիսի 5-ի թիվ 114-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3-4 էջ
2. Ամփոփագիր	5-8 էջ
3. Հաշվեքննության հիմնական սրահներ	9 էջ
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ծնունդները	10-12 էջ
5. Անհատականության հաշվարկային գործիքներ	13-15 էջ
6. Հաշվեքննությանը առանձնահատուկ ուղի փաստեր	16-46 էջ
7. Հետազոտական գործընթաց	47-48 էջ
8. Առաջարկություններ	49-50 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի փետրվարի 04-ի թիվ 24-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1983-Ն, 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1900-Ն, 2021 թվականի մարտի 3-ի թիվ 267-Ն, 2021 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2021 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1382-Ն, 2021 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 1426-Ն, 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2022 թվականի փետրվարի 14-ից մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն: Սույն եզրակացությունը կազմվել է օգտագործելով 2021 թվականի պետական բյուջեի

երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
Ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը, համաձայն տարեկան հաշվետվությունների, կազմել է 24,994,489.11 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 16,846,127.08 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 8,148,362.03 հազ. դրամի նվազեցում 32.6%-ի չափով: Փաստացի ֆինանսավորվել է 13,929,108.62 հազ. դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ՝ 82.7%, դրամարկղային ծախսը կազմել է 14,271,393.14 հազ. դրամ կամ 84.7%, փաստացի ծախսը՝ 14,932,065.27 հազ. դրամ՝ 88.6%, դեբիտորական պարտքը կազմել է տարեսկզբին 1,702,545.65 հազ. դրամ, որից 157,496.4 հազ. դրամ գումարը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե՝ որպես 2020 թվականի պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարից վերադարձվելիք մուտք (արտացոլված է հավելված 2-ում), իսկ 818,346.0 հազ. դրամը 2021 թվականի ընթացքում փաստացի ծախսագրվել է (արտացոլված է աղյուսակ 1-ում): Տարեվերջին դեբիտորական պարտքի մնացորդը կազմել է 886,213.90 հազ. դրամ, որը հիմնականում բաղկացած է 1088 (Զբաղվածության ծրագիր՝ 74,979.65 հազ. դրամ) և 1098 (Բնակարանային ապահովում՝ 640,000.0 հազ. դրամ) ծրագրերից, դեբիտորական պարտքի մնացորդն ընդհանուր առմամբ գոյացել է թվով 8 ծրագրերից, ինչպես նաև նախորդ տարիների դեբիտորական պարտքերից: Կրեդիտորական պարտքերը տարեսկզբին կազմել է 9,083.22 հազ. դրամ, տարեվերջին՝ 12,697.26 հազ. դրամ:
- Նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանից՝ 24,994,489.11 հազ. դրամից 8,148,362.03 հազ. դրամի նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառումով նախատեսված գումարից «ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 253-Ն որոշմամբ 10,440,162.0 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ: Ընդ որում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման մասով տարեկան պլանը կազմել է 10,619,496.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 160,514.0 հազ. դրամ: Հատկանշական է, որ 2019 և 2020 թվականներին նույնպես պլանավորումն իրականացվել էր նույն սկզբունքով՝ հաստատված պլանը կազմել էր 10,619,496.0 հազ. դրամ, այնուհետև այն նվազեցվել էր համապատասխանաբար 10,410,264.0 հազ. դրամով և 10,430,507.5 հազ. դրամով: Արդյունքում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների

աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման մասով նախարարության կողմից բյուջեի պլանավորման նման մոտեցումը թերի հիմնավորված է, առավել ևս, որ ի սկզբանե ակնհայտ էր, որ այդ գումարները հետագայում բաշխվելու էին բյուջետային համապատասխան այլ կարգադրիչներին:

- ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանվել են նոր ծրագրեր: Նշված նոր միջոցառումներից թվով 3-ի դեպքում (1032-11014, 1032-31003 և 1117-11005) դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել, իսկ թվով 2-ի դեպքում դրամարկղային ծախսի և փաստացի ծախսի էական թերակատարումներ է արձանագրվել՝ 1032-32005 միջոցառման մասով կատարվել է 23.66%-ով, 1205-12020 միջոցառման մասով՝ 59.12%-ով:

- Նախարարության կողմից 2021 թվականի տարեկան արդյունքներով իրականացված ընդամենը թվով 59 միջոցառումներից թվով 2-ը կառավարության որոշումներով հանվել է, թվով 16-ի դեպքում՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարողական կազմել է 99-100% (որից՝ 11-ի դեպքում՝ 100%), թվով 4-ի դեպքում՝ եղել է 0 կատարողական, իսկ թվով 37 դեպքերում տարեկան ճշտված պլանի նկատմամբ եղել են թերակատարումներ՝ 20,7%-ից մինչև 99%, ընդ որում թվով 14-ի դեպքում ճշտված պլանով նախատեսվել է ավելի ցածր ցուցանիշ, քան տարեկան հաստատված պլանը, այսինքն կատարվել է հաստատված պլանի նվազեցումներ, 15-ի դեպքում տարեկան պլանի նկատմամբ ճշտված պլանի փոփոխություններ չեն եղել, թվով 3 միջոցառումների դեպքում կատարվել է հաստատված պլանի նկատմամբ ճշտված պլանի ցուցանիշի ավելացում, ինչպես նաև թվով 5 նոր միջոցառումներ, այսինքն երբ հաստատված բյուջեով տարեկան պլանավորում չէր իրականացվել, սակայն ճշտված պլանով սահմանվել են նոր միջոցառումներ և նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ: Հատկանշական է, որ դրանցից ճշտված պլանի նկատմամբ մի շարք դեպքերում նույնպես առկա են թերակատարումներ, այն դեպքում, երբ տարեկան հաստատված պլանը զգալի չափով նվազեցվել էր:

- Ընդհանուր առմամբ նախարարության 3, 6 և 9 ամիսների հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև 2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ: Նշված ժամանակաշրջանների ընթացիկ եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան Նախարարությունը երեք, վեց և ինն ամիսների մասով հաշվեքննությունների եզրակացությունների մասով տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան իրամասներ,

հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2021 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև 2-ում նշված ցուցանիշների հետ՝ անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

- ՀՀ կառավարության 27.08.2021թ. թիվ 1382-Ն որոշմամբ «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 20,880.2 հազ. դրամ, իսկ «Գավառի մանկան տուն» ՊՈԱԿ-ին՝ 18,043.7 հազ. դրամ, ընդամենը՝ 38,923.9 հազ. դրամ: Սակայն վերոհիշյալ կազմակերպությունների հետ կնքված համաձայնագրերով պայմանագրային գումարների փոփոխություն է եղել համապատասխանաբար՝ 17,227.4 հազ. դրամ և 7,343.6 հազ. դրամ ընդամենը՝ 24,571.0 հազ. դրամ: Գումարներ է հատկացվել նաև «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ 7,399.9 հազ. դրամ և «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ին՝ 4,660.3 հազ. դրամ, որոնք ընդգրկված չեն եղել ՀՀ կառավարության որոշմամբ: Այսպիսով առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1382-Ն որոշման պահանջների հետ:

- Ըստ կազմակերպությունների պայմանագրային ցուցանիշների և ֆինանսական հաշվետվությունների համադրությամբ պարզվեց՝

«Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ի պայմանագրային գումարը կազմել է 249,805.7 հազ. դրամ, իսկ մարդ/օրերի տարեկան քանակը՝ 25550 մ/օր: 1 շահառուի հաշվով 1 օրվա պայմանագրով նախատեսված գինը կազմում է 9777 դրամ (249,805.7/25550մ/օր):

Փաստացի կատարված ծախսերը կազմել է 240,659.5 հազ. դրամ, փաստացի մարդ/օրերի տարեկան քանակը՝ 23537 մ/օր կամ պլանով նախատեսվածից 2013 մարդ/օր պակաս: 1 շահառուի հաշվով 1 օրվա փաստացի հաշվարկային գինը կազմում է 10225 դրամ (240,659.5/23537մ/օր): Փաստորեն 1 շահառուի 1 օրվա պլանային գնից ավել է ծախսվել 448 դրամ (10225դր.-9777դր.), որը տարվա համար կազմում է 10,544.6 հազ. դրամ (448դր.*23537 մ/օր):

«Գավառի մանկան տուն» ՊՈԱԿ-ի պայմանագրային գումարը կազմել է 168,227.5 հազ. դրամ, իսկ մարդ/օրերի տարեկան քանակը՝ 21900 մ/օր: 1 շահառուի հաշվով 1 օրվա պայմանագրով նախատեսված գինը կազմում է 7682 դրամ (168,227.5/21900մ/օր):

Փաստացի կատարված ծախսերը կազմել է 161,616.9 հազ. դրամ, փաստացի մարդ/օրերի տարեկան քանակը՝ 19089 մ/օր կամ պլանով նախատեսվածից՝ 2811 մարդ/օր պակաս: 1 շահառուի հաշվով 1 օրվա փաստացի հաշվարկային գինը կազմում է 8466 դրամ (161,616.9/19089մ/օր): Փաստորեն 1 շահառուի 1 օրվա

պլանային գնից ավել է ծախսվել 784 դրամ (8466դր-7682դր), որը տարվա համար կազմում է 14,965.8 հազ. դրամ (784դր*19089 մ/օր):

Այսպիսով առկա է անհամապատասխանություն վերոնշյալ կազմակերպություններում 1 շահառուի 1 օրվա պլանային գների և փաստացի հաշվարկային գների միջև: Կազմակերպությունների թերբեռնվածության արդյունքում 1 շահառուի 1 օրվա պլանային գինը գերազացվել է՝ առաջացնելով տրամադրված դրամաշնորհի ոչ արդյունավետ օգտագործման:

- Նախորդ տարիներին ՊՈԱԿ-ների հետ Նախարարության կողմից կնքված դրամաշնորհի պայմանագրերի «Ցուցանիշների» թիվ 2 հավելվածի 8-րդ կետով հստակ սահմանվել է՝ «1 շահառուի հաշվով 1 օրվա նախատեսված գին», նորմը, ինչը 2021 թվականին կնքված պայմանագրերում բացակայում է:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE և LSREP) համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննության իրականացնելու համար: 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները, ինչպես նաև հաշվետվություններում ոչ ֆինանսական ցուցանիշների մասով թերի պլանավորման, ինչպես նաև փաստացի ցուցանիշների մասով՝ թերի արտացոլման խնդիրները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Ի պատասխան Հաշվեքննիչ պալատի 05.04.2022թ. թիվ ՀՊԵ-ԿԿ-78 գրության, որով նախարարություն էր ներկայացվել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ» հաշվեքննության արձանագրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 18.04.2022թ. թիվ ՄՆ/10583-2022 գրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատ է ներկայացվել հաշվեքննության արձանագրության ստորագրված տարբերակը, որում նախարարության կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը, համաձայն տարեկան հաշվետվությունների, կազմել է 24,994,489.11 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 16,846,127.08 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 8,148,362.03 հազ. դրամի նվազեցում կամ 32.6%-ի չափով: Փաստացի ֆինանսավորվել է 13,929,108.62 հազ. դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ՝ 82.7%, դրամարկղային ծախսը կազմել է 14,271,393.14 հազ. դրամ կամ 84.7%, փաստացի ծախսը՝ 14,932,065.27 հազ. դրամ՝ 88.6%, դեբիտորական պարտքը կազմել է տարեսկզբին 1,702,545.65 հազ. դրամ, որից 157,496.4 հազ. դրամ գումարը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե՝ որպես 2020 թվականի պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարից վերադարձվելիք մուտք (արտացոլված է հավելված 2-ում), իսկ 818,346.0 հազ. դրամը 2021 թվականի ընթացքում փաստացի ծախսագրվել է (արտացոլված է աղյուսակ 1-ում):

Աղյուսակ 1

2021 թվականի տարեսկզբի դեբիտորական պարտքերից կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ

Հ/Հ	Ծրագրի / Միջացառման անվանումը	Միջոցառումն իրականացնողի անվանումը	Գումարը / հազ. դրամ
1	1032-11013՝ Ռազմական դրությամբ պայմանավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին ժամանակավոր կացարանի տրամադրման ծառայություններ	«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ	4,892.7
2	1098-12003՝ Հայաստանի Հանրապետության Մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում	ՀՀ ԱՍՀՆ	220,500.0
3	1098-12005՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քանդման ենթակա վթարային, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի շենքերի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովում	ՀՀ ԱՍՀՆ	132,917.0
4	1117-11001՝ Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ	ՀՀ ԱՍՀՆ	1,098.8
5	1205-12018՝ Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին	«Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»	458,937.5
	Ընդամենը		818,346.0

Տարեվերջին դեբիտորական պարտքի մնացորդը կազմել է 886,213.90 հազ. դրամ, որը հիմնականում բաղկացած է 1088 (Զբաղվածության ծրագիր՝ 74,979.65 հազ. դրամ) և 1098 (Բնակարանային ապահովում՝ 640,000,0 հազ. դրամ) ծրագրերից, դեբիտորական պարտքի մնացորդն ընդհանուր առմամբ գոյացել է թվով 8 ծրագրերից, ինչպես նաև նախորդ տարիների դեբիտորական պարտքերից: Կրեդիտորական պարտքերը տարեսկզբին կազմել է 9,083.22 հազ. դրամ, տարեվերջին՝ 12,697.26 հազ. դրամ: Մասնավորապես՝

«Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 2,225,729.78 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 1,998,318.83 հազ. դրամ կամ 89.8%, դրամարկղային ծախսը կազմել է 1,979,174.71 հազ. դրամ կամ 88.9%, փաստացի ծախսը՝ 1,974,622.94 հազ. դրամ՝ 88.7%, այդ թվում՝

«Աշխատանքի վարձատրություն» հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 1,729,360.7 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 1,547,120.68 հազ. դրամ կամ 89.5%, դրամարկղային ծախսը կազմել է 1,528,834.65 հազ. դրամ կամ 88.4%, փաստացի ծախսը՝ 1,528,869.05 հազ. դրամ՝ 88.4%:

«Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում» հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 165,037.2 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 122,680.49 հազ. դրամ կամ 74.3%, դրամարկղային ծախսը կազմել է 121,818.49 հազ. դրամ կամ 73.8%, փաստացի ծախսը՝ 117,235.32 հազ. դրամ՝ 71.0%:

«Դրամաշնորհներ» հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 384.9 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 384.9 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է՝ 383.59 հազ. դրամ՝ 99.7%:

«Այլ ծախսեր» հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել, փաստացի ֆինանսավորվել է 2,998.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2,949.2 հազ. դրամ՝ 98,4%, փաստացի ծախսը՝ 2,946.2 հազ. դրամ՝ 98.3%:

Ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների ծախսերի հաշվեքննությամբ արձանագրվեց, որ Նախարարության դեբիտորական պարտքերը՝ 01.01.2021 թվականի դրությամբ կազմել է 8,259.56 հազ. դրամ: Տարեվերջին այն նվազել է և կազմել՝ 7,160.75 հազ. դրամ կամ 86.7%: Կրեդիտորական պարտքերը՝ 01.01.2021 թվականի դրությամբ կազմել է 9,081.02 հազ. դրամ, որը տարեվերջին նվազել և կազմել է 2,838.05 հազ. դրամ կամ 31.3%:

Դեբիտորական պարտքի հիմնական հոդվածներն են՝ «Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ»-4,146.98 հազ. դրամ, «Պահեստավորված տրանսպորտային նյութեր»-2,238.53 հազ. դրամ:

Կրեդիտորական պարտքի հիմնական հոդվածներն են՝ «Էներգետիկ ծառայություններ»-1,665.35 հազ. դրամ, «Կապի ծառայություններ»-1,172.7 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանության վերաբերյալ գրառումները:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1141-11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի վերաբերյալ

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված հաշվետվության, 2021 թվականի տարեկան պլանով՝ ծրագրում ընդգրկված 5 կազմակերպություններին նախատեսվել է ֆինանսավորել 2,017,270.6 հազ. դրամ՝ 649 շահառուի սպասարկման համար: Ճշտված պլանով՝ նույն քանակի շահառուների սպասարկման համար նախատեսվել է 1,915,270.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,864,457.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,855,144.1 հազ. դրամ: Ծրագրում փաստացի ընդգրկված շահառուների թիվը կազմել է 584 շահառու:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվեց, որ ծրագրում ընդգրկված 5 կազմակերպությունների հետ կնքվել է 1,855,495.3 հազ. դրամ գումարով պայմանագրեր՝ միջին ամսական 575 շահառուների սպասարկման համար: ՀՀ կառավարության 27.08.2021թ. թիվ 1382-Ն որոշմամբ «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 20,880.2 հազ. դրամ, իսկ «Գավառի մանկան տուն» ՊՈԱԿ-ին՝ 18,043.7 հազ. դրամ, ընդամենը՝ 38,923.9 հազ. դրամ: Սակայն վերոհիշյալ կազմակերպությունների հետ կնքված համաձայնագրերով պայմանագրային գումարների փոփոխություն է եղել համապատասխանաբար՝ 17,227.4 հազ. դրամ և 7,343.6 հազ. դրամ ընդամենը՝ 24,571.0 հազ. դրամ: Գումարներ է հատկացվել նաև «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ 7,399.9 հազ. դրամ և «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ին՝ 4,660.3 հազ. դրամ, որոնք ընդգրկված չեն եղել ՀՀ կառավարության որոշմամբ: Արդյունքում 5 կազմակերպությունների պայմանագրային գումարը կազմել է 1,892,126.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ՝ 98.8%:

Ըստ կազմակերպությունների պայմանագրային ցուցանիշների և ֆինանսական հաշվետվությունների համադրությամբ պարզվեց՝

- «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ի պայմանագրի թիվ 2 հավելվածի համաձայն պայմանագրային գումարը կազմել է 249,805.7 հազ. դրամ, իսկ մարդ/օրերի տարեկան քանակը՝ 25550 մ/օր: 1 շահառուի հաշվով 1 օրվա պայմանագրով նախատեսված գինը կազմում է 9777 դրամ (249,805.7/25550մ/օր):

Փաստացի կատարված ծախսերը՝ թիվ 4 հավելվածով սահմանված, կազմել է 240,659.5 հազ. դրամ, փաստացի մարդ/օրերի տարեկան քանակը՝ 23537 մ/օր կամ պլանով նախատեսվածից 2013 մարդ/օր պակաս: 1 շահառուի հաշվով 1 օրվա փաստացի հաշվարկային գինը կազմում է 10225 դրամ (240,659.5/23537մ/օր):

Փաստորեն 1 շահառուի 1 օրվա պլանային գնից ավել է ծախսվել 448 դրամ (10225դր.-9777դր.), որը տարվա համար կազմում է 10,544.6 հազ. դրամ (448դր*23537 մ/օր):

- «Գավառի մանկան տուն» ՊՈԱԿ-ի պայմանագրի թիվ 2 հավելվածի համաձայն պայմանագրային գումարը կազմել է 168,227.5 հազ. դրամ, իսկ մարդ/օրերի տարեկան քանակը՝ 21900 մ/օր: 1 շահառուի հաշվով 1 օրվա պայմանագրով նախատեսված գինը կազմում է 7682 դրամ (168,227.5/21900մ/օր):

Փաստացի կատարված ծախսերը՝ թիվ 4 հավելվածով սահմանված, կազմել է 161,616.9 հազ. դրամ, փաստացի մարդ/օրերի տարեկան քանակը՝ 19089 մ/օր կամ պլանով նախատեսվածից՝ 2811 մարդ/օր պակաս: 1 շահառուի հաշվով 1 օրվա փաստացի հաշվարկային գինը կազմում է 8466 դրամ (161,616.9/19089մ/օր): Փաստորեն 1 շահառուի 1 օրվա պլանային գնից ավել է ծախսվել 784 դրամ (8466դր-7682դր), որը տարվա համար կազմում է 14,965.8 հազ. դրամ (784դր*19089 մ/օր):

Այսպիսով առկա է անհամապատասխանություն վերոնշյալ կազմակերպություններում 1 շահառուի 1 օրվա պլանային գների և փաստացի հաշվարկային գների միջև: Կազմակերպությունների թերբեռնվածության արդյունքում 1 շահառուի 1 օրվա պլանային գինը գերազանցվել է՝ առաջացնելով տրամադրված դրամաշնորհի ոչ արդյունավետ օգտագործման:

Հարկ է նշել, որ նախորդ տարիներին ՊՈԱԿ-ների հետ Նախարարության կողմից կնքված դրամաշնորհի պայմանագրերի «Ցուցանիշների» թիվ 2 հավելվածի 8-րդ կետով հստակ սահմանվել է՝ «1 շահառուի հաշվով 1 օրվա նախատեսված գին» նորմը, ինչը 2021 թվականին կնքված պայմանագրերում բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիր

«Երևանի մանկան տուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ների հետ կնքված պայմանագրերով մեկ շահառուի մեկ օրվա փաստացի գների գերազանցումը պլանային գների նկատմամբ պայմանավորված է ՀՀ կառավարության 27.08.2021 թվականի N 1382-Ն որոշմամբ հասկացված ֆինանսական միջոցներով, որը նպատակաուղղված է եղել ՊՈԱԿ-ների աշխատակիցների աշխատավարձի ֆոնդի ավելացմանը, որը հանդիսանում է հաստատված ծախս և կախված չէ շահառուների թվաքանակից:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Բացատրությունը չի ընդունվում, քանի որ չի ներառում արձանագրությունում ներառված խնդիրների պարզաբանումը, մասնավորապես՝ հաշվեքննության արձանագրությամբ նշված 1 շահառուի 1 օրվա պլանային գների և փաստացի հաշվարկային գների միջև անհամապատասխանության արձանագրումը կատարվել է արդեն իսկ հաշվի ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

առնելով հաշվեքննության օբյեկտի կողմից մատնանշված 1382-Ն որոշմամբ ֆինանսական միջոցների հատկացման փաստը: Ի դեպ, նշված որոշմամբ 38,923.9 հազ. դրամ գումարը հատկացվել է «Երևանի մանկան տուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ների միջև բաշխելու համար, այն դեպքում, երբ Նախարարության կողմից, բացի նշված ՊՈԱԿ-ներից, այն բաշխվել է ևս 2 ՊՈԱԿ-ի միջև, ինչի հետևանքով չի պահպանվել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված բաշխման համամասնությունը:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված 2021թ. պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը, համաձայն տարեկան հաշվետվությունների, կազմել է 24,994,489.11 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 16,846,127.08 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 8,148,362.03 հազ. դրամի նվազեցում կամ 32.6%-ի չափով:

Նշված տվյալները արտացոլված են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE և LSREP) համակարգերի ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարողականների աղյուսակներում: Հարկ է նշել, որ վեց ամիսների, ինն ամիսների և տարեկան կատարողականների աղյուսակներում արդեն իսկ արտացոլված չեն 1-ին եռամսյակում նախարարության կողմից կատարված 1088՝ զբաղվածության ծրագրերի միջոցառումների գերակշռող մասը, ինչպես նաև «1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11003, «1160 Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն» ծրագրի 11005 միջոցառումները, քանի որ ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 980-Ն որոշմամբ դրանց կատարողները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից փոխանցվել են նախարարության «Միասնական սոցիալական ծառայությանը»:

Նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանից՝ 24,994,489.11 հազ. դրամից 8,148,362.03 հազ. դրամի նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառումով նախատեսված գումարից «ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 253-Ն որոշմամբ 10,440,162.0 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ: Ընդ որում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման մասով տարեկան պլանը կազմել է 10,619,496.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 160,514.0 հազ. դրամ: Հատկանշական է, որ 2019 և 2020 թվականներին նույնպես պլանավորումն իրականացվել էր նույն սկզբունքով՝ հաստատված պլանը կազմել էր 10,619,496.0 հազ. դրամ, այնուհետև այն նվազեցվել

էր համապատասխանաբար 10,410,264.0 հազ. դրամով և 10,430,507.5 հազ. դրամով:

Արդյունքում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման մասով նախարարության կողմից բյուջեի պլանավորման նման մոտեցումը թերի հիմնավորված է, առավել ևս, որ ի սկզբանե ակնհայտ էր, որ այդ գումարները հետագայում բաշխվելու էին բյուջետային համապատասխան այլ կարգադրիչներին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1015-12001 միջոցառման վերաբերյալ

1015-12001 միջոցառման ամբողջական գումարը՝ բաշխված ըստ միջոցառման կատարողների, Ֆինանսների նախարարություն է ներկայացվել 2019-2021, 2020-2022, 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերի շրջանակներում՝ ինչպես 2019, այնպես էլ՝ 2020 և 2021 թվականների ՀՀ պետական բյուջեների համար:

Այսինքն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 1015-12001 միջոցառման բյուջետային ֆինանսավորման հայտը յուրաքանչյուր տարի Ֆինանսների նախարարություն է ներկայացնում բաշխված՝ ըստ միջոցառման կատարող համարվող համապատասխան մարմինների:

Մինչդեռ, Ֆինանսների նախարարության կողմից ՀՀ-ի՝ նշված տարիների բյուջեներում ծրագրի գումարը նախատեսվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար՝ որպես բյուջետային գլխավոր կարգադրիչ, մեկ տողով՝ հետագայում ըստ միջոցառման կատարող մարմիններին վերաբաշխելու պայմանով: Նույն սկզբունքով նաև կազմվել են տվյալ տարիների ՀՀ կառավարության՝ ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների համապատասխան որոշումները (այդ որոշումներով էլ առանձին կետով վերաբաշխումների նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու մասով տրվել է մեկամսյա ժամկետ ինչպես 2019, այնպես էլ՝ 2020 և 2021 թվականներին):

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Ի գիտություն ընդունելով հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը գտնում ենք նպատակահարմար նախարարության կողմից հարցի ըստ էության քննարկումը ՀՀ ֆինանսների նախարարության հետ պլանավորման նման մոտեցման հիմնավորումները ստանալու նպատակով՝ հաշվի առնելով Հաշվեքննողի դիտարկումը:

6.2 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված, սակայն չկատարված ծրագրեր

6.2.1 «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում» (1032-12001) միջոցառումով նախատեսվել է 14,400.0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1983-Ն որոշմամբ գումարն ուղղվել է այլ ծրագրերի կատարմանը:

6.2.2 «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն» (1141-12007) միջոցառումով նախատեսվել է 1,440.0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-12007 միջոցառման վերաբերյալ

2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1774-Ն որոշման համաձայն լրացում է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1555-Ն որոշման մեջ, որի համաձայն ծրագրի շահառու կարող էին հանդիսանալ նաև 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մանկապարտեզի շրջանավարտ հանդիսացող անձինք:

Վերոնշյալով պայմանավորված՝ 12007 միջոցառման իրականացման պահանջարկ չի գրանցվել:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է նշված միջոցառման պահանջարկի բացակայության հանգամանքները:

6.2.3 «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում» (1160-11001) միջոցառումով նախատեսվել է 8,100.0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1808-Ն որոշմամբ գումարը ուղղվել է այլ ծրագրերի կատարմանը:

6.3 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով նախապես չնախատեսված, սակայն ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նոր ծրագրեր

6.3.1 «Շենքային պայմանների բարելավման նպատակով շինարարական նյութերի ձեռքբերում» (1032-11014) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1983-Ն որոշմամբ՝ 932.0 հազ. դրամ գումարով, որի մասով դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել:

6.3.2 «18 տարեկանից բարձր տարիքից անձանց խնամքի համայնքային փոքր տների շենքային պայմանների բարելավում» (1032-31002) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1737-Ն որոշմամբ՝ 3,600.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 100%:

6.3.3 «18 տարեկանից բարձր տարիքից անձանց խնամքի համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» (1032-31003) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 585-Ն որոշմամբ՝ 20,371.5 հազ. դրամ գումարով, որի մասով դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել:

6.3.4 «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության կազմակերպություններում գույքի և սարքավորումների ձեռքբերում» (1032-32005) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1983-Ն որոշմամբ՝ 35,645.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 23.66%-ով կամ 8,433.7 հազ. դրամ:

6.3.5 «Աջակցություն կանանց ձեռներեցության խթանման և աշխատունակության բարձրացման նպատակով» (1088-12017) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2097-Ն որոշմամբ՝ 75,000.0 հազ. դրամ գումարով, որը Նախարարության կողմից ձևակերպվել է որպես տարեվերջին դեբիտորական պարտք:

6.3.6 «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (1117-11005) ծրագիրը նախատեսվել է համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1451-Ա որոշմամբ՝ 221.67 հազ. դրամ գումարով, որի մասով դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել:

6.3.7 «Համաշխարային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-հակամարտությունից տուժած ընտանիքներին օժանդակություն, դրամաշնորհային ծրագրի կառավարում» (1117-11009) ծրագիրը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1900-Ն որոշմամբ՝ 6,237.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 97.2%-ով կամ 6,061.5 հազ. դրամ:

6.3.8 «Էկզոսկելետոնի ձեռքբերում վերականգնողական կենտրոնին տրամադրելու նպատակով, օժանդակություն հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման գործընթացին» (1160-21001) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ

կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 1247-Ն որոշմամբ՝ 44,260.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 71.92%-ով կամ 31,833.4 հազ. դրամ:

6.3.9 «Ռազմական դրությամբ պայմանավորված ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասներ փոխհատուցում» (1205-12013) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 3-ի թիվ 267-Ն որոշմամբ՝ 7,200.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 99.9%-ով:

6.3.10 «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին» (1205-12018) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1213-Ն և նոյեմբերի 17-ի թիվ 1868-Ն որոշումներով՝ 1,461,450.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 100.0%-ով:

6.3.11 «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց» (1205-12020) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ՝ 600,000.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 59.12%-ով, կամ 354,700.0 հազ. դրամ:

6.3.12 «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին դրամական աջակցություն» (1205-12024) միջոցառումը նախատեսվել է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 158-Ն որոշմամբ՝ 36,108.0 հազ. դրամ գումարով, որը կատարվել է 86.27%-ով, կամ 31,152.0 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ նշված նոր միջոցառումներից թվով 3-ի դեպքում /1032-11014, 1032-31003 և 1117-11005/ դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել, իսկ թվով 2-ի դեպքում դրամարկղային ծախսի և փաստացի ծախսի էական թերակատարումներ է արձանագրվել՝ 1032-32005 միջոցառման մասով կատարվել է 23.66%-ով, 1205-12020 միջոցառման մասով՝ 59.12%-ով:

6.4 Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային և փաստացի ծախսերի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Հիմնականում որպես թերակատարման

պատճառ նշվել է շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու հանգամանքները:

Արդյունքում նախարարության կողմից իրականացված 59 միջոցառումներից թվով 2-ը կառավարության որոշումներով հանվել է, թվով 16-ի դեպքում՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարողական կազմել է 99-100% (որից՝ 11-ի դեպքում՝ 100%), թվով 4-ի դեպքում՝ եղել է 0 կատարողական, իսկ թվով 37 դեպքերում տարեկան ճշտված պլանի նկատմամբ եղել են թերակատարումներ՝ 20,7%-ից մինչև 99%, ընդ որում թվով 14-ի դեպքում ճշտված պլանով նախատեսվել է ավելի ցածր ցուցանիշ, քան տարեկան հաստատված պլանը, այսինքն կատարվել է հաստատված պլանի նվազեցումներ, 15-ի դեպքում տարեկան պլանի նկատմամբ ճշտված պլանի փոփոխություններ չեն եղել, թվով 3 միջոցառումների դեպքում կատարվել է հաստատված պլանի նկատմամբ ճշտված պլանի ցուցանիշի ավելացում, ինչպես նաև թվով 5 նոր միջոցառումներ, այսինքն երբ հաստատված բյուջեով տարեկան պլանավորում չէր իրականացվել, սակայն ճշտված պլանով սահմանվել են նոր միջոցառումներ և նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Հատկանշական է, որ դրանցից ճշտված պլանի նկատմամբ մի շարք դեպքերում նույնպես առկա են թերակատարումներ, այն դեպքում, երբ տարեկան հաստատված պլանը զգալի չափով նվազեցվել էր: Այսպես, օրինակ.

- 1117-11003 - հանրային իրազեկման միջոցառումների իրականացում՝ տարեկան պլանը կազմել է 21,327.4 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 6,327.4, նվազել է 15,000.0 հազ. դրամով կամ 77.33%-ով, նվազեցումը կատարվել է ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 1426-Ն որոշմամբ: Դրամարկղային ծախսը և փաստացի ծախը կազմել է 3,964.4 հազ. դրամ, կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 62.75%: Ընդ որում ինն ամիսների հաշվետվություններում ինն ամիսների ճշտված պլանը կազմել էր 929.2 հազ. դրամ՝ տարեկան 6,327.4 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում: Համաձայն 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ որպես թերակատարման պատճառներ նախարարության կողմից ներկայացվել է՝ «ծրագրերի մեծ մասը ուղղվել են հետպատերազմական իրավիճակի բարելավմանը, իրականացված միջոցառումները եղել են լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Հեռուստատեսային վճարովի ծառայություններից նպատակահարմար չի եղել օգտվել: Ֆինանսական որոշ միջոցներ ուղղվել են ավելի շատ տպագրական նյութեր պատրաստելու համար,

սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներն առավել լուսաբանելու նպատակով: Լուսանկարչական ծառայությունների մասով իրականացվել է ըստ անհրաժեշտության»:

- 1117-11001 - Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ՝ 2021թ-ի տարեկան պլանով նախատեսվել է 2,762,910.2 հազ. դրամ: ՀՀ կառավարության 15.04.2021թ. թիվ 566-Ն, 27.05.2021 թվականի N878-Ն, 21.10.2021 թ N1737-Ն որոշումներով ծրագրային գումարը նվազեցվել է 865,129.4 հազ. դրամով՝ 31.3%-ով: Ճշտված պլանով նախատեսվել է՝ 1,897,780.8 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի ֆինանսավորվել է 1,673,184.07 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 1,653,985.93 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 1,649,434.16 հազ.դրամ՝ առաջացնելով 19,198.14 հազ. դրամ դրամարկղի մնացորդ: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև-4 ի՝ տարեվերջին դեբիտորական պարտքը կազմել է 7,160.75 հազ.դրամ, իսկ կրեդիտորական պարտքը՝ 2,838.05 հազ.դրամ: Հաշվի առնելով ձև-2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ ճշտված պլանի նկատմամբ՝ կատարողականը կկազմի 86.9% կամ ճշտված պլանի նկատմամբ չի ծախսվել 224,596.73 հազ. դրամ: Ընդ որում 9 ամիսների հաշվետվության ձև 2-ում նշված փաստացի ծախսի կատարման տոկոսը՝ 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.4 %, կատարման տեմպը նվազել է 6.5 %-ով: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 87.2 %, ընդ որում 9 ամիսների կատարման տոկոսը կազմել է 88.8 %, կատարման տեմպը նվազել է 1.6 %-ով: Համաձայն 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության (հավելված N11.1) որպես թերակատարման պատճառներ նախարարության կողմից ներկայացվել է՝ «Պայմանավորված է պահպանման ծախսերի որոշ ծախսային հոդվածներով նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս ծախսեր կատարելու (էլեկտրաէներգիա, կապ) և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հայտարարված մրցույթի արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսման հանգամանքներով»:

- 1206-11001 - Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր - Տարեկան պլանը կազմել է 902,718.4 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 318,354.1, նվազել է 584,364.3 հազ. դրամով կամ 64.73%-ով: Դրամարկղային ծախսը կազմել է 168,986.9 հազ. դրամ, կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 53.1%: Ծրագրի ընթացքում խորհրդատվական ծառայությունների շրջանակում

իրականացվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման, շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային, տեխնիկական հսկողության աշխատանքներ, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման միջոցառումներ, ինչպես նաև պայմանագրեր են կնքվել նաև անհատ խորհրդատուների հետ (գնումների մասնագետ, ծրագրի ինժեներ, գնահատման մասնագետ և այլն): 2015-2020թթ. ընթացքում կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերից 2021թ.-ի ընթացքում գործել են 21-ը, որից 3-ը կնքվել են 2020թ.-ին, իսկ 7 պայմանագրեր 2021թ. ընթացքում լուծվել կամ ավարտվել են: 2021թ.-ին իրականացվում են պայմանագրերով նախատեսված աշխատանքները: 2021թ. ընթացքում խորհրդատուների հետ կնքվել են 2 նոր պայմանագրեր (անհատ խորհրդատու, ծրագրի աուդիտ): Արդյունքում 2021 թվականի տարեվերջին կազմակերպությունների հետ թվով 14 պայմանագիր է գործել: Հետաձգվել են վերապատրաստման միջոցառումները, որոնց հետաձգումը կապված է միասնական սոցիալական ծառայությունների կառուցվածքի և հաստիքակազմի մշակման աշխատանքներով, արդյունքում հետաձգվել է վերապատրաստվողների քանակությունը և կատեգորիաների բաժանման աշխատանքները: Համաձայն 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության (հավելված N11.1) որպես թերակատարման պատճառներ նախարարության կողմից ներկայացվել է՝ «Սահմանված ժամկետներից, որոշ ՄՄԾՏԿ-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և շինվերանորոգումների ավարտով պայմանավորված հեղինակային հսկողությունների ուշացմամբ, մասնագիտական ուսուցման հետաձգմամբ և ծրագրի ինժեների հետ կնքված պայմանագրի լուծմամբ»:

6.5 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի տարեկան ֆինանսական ցուցանիշների կատարողականների վերլուծությունն իրականացնելիս անհրաժեշտ է նաև իրականացնել նախորդիվ իրականացրած 3, 6 և 9 ամիսների համար հաշվեքննության արդյունքների համեմատական բնութագրերը: Մասնավորապես՝

Ինն ամիսների պլանը կազմել է 17,426,735.5 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 12,576,048.9 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 4,850,686.6 հազ. դրամի նվազեցում 27.8%-ի չափով: Ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 10,150,382.81 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 2,425,666.09 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ

կազմել է 80.7 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 11,412,017.72 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 1,261,634.9 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը (կատարողականը) ճշտված պլանի նկատմամբ կկազմի 90.74 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 1,226,458.98 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 954,306.87 հազ. դրամ:

Ինն ամիսների համար արձանագրվել էր Ձև-2 հաշվետվության ցուցանիշների անհամապատասխանություն, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև-2 հաշվետվությամբ թվով 3 միջոցառումների մասով նշված փաստացի ծախսերի ցուցանիշը 2,968.6 հազ. դրամի չափով չէր համապատասխանել ինն ամիսներում փաստացի կատարված աշխատանքներին: Ինն ամիսների ընթացքում, առաջին կիսամյակի թվով 1 ծրագրային միջոցառման փոխարեն, առկա է 3-ը՝ 2-ով ավելի, արժեքային արտահայտությամբ՝ 2,878.6 հազ. դրամով ավելի, քան առաջին կիսամյակին:

Վեց ամիսների պլանը կազմել է 11,147,792.9 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 7,366,697.9 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 3,781,095.0 հազ. դրամի նվազեցում 33.9%-ի չափով: 1-ին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 5,518,588.7 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 1,848,109.2 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 74.9 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 6,898,084.83 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 1,379,496.1 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը (կատարողականը) ճշտված պլանի նկատմամբ կկազմի 93.64 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 1,113,384.35 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 961,014.1 հազ. դրամ:

Վեց ամիսների համար արձանագրվել էր Ձև-2 հաշվետվության ցուցանիշների անհամապատասխանություն, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև-2 հաշվետվությամբ թվով 1 միջոցառման մասով նշված փաստացի ծախսերի ցուցանիշը 90,0 հազ. դրամի չափով չէր համապատասխանել վեց ամիսներում փաստացի կատարված աշխատանքներին: Մինչույն ժամանակ 1-ին եռամսյակում արձանագրվել էր թվով 4 ծրագրային միջոցառումներ՝ 13,253.11 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին եռամսյակի համապատասխան ծրագրերի Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սակայն 1-ին կիսամյակում, առաջին եռամսյակի 4 ծրագրային

միջոցառումների փոխարեն, առկա է 1-ը՝ 3-ով պակաս, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 13,073.11 հազ. դրամով պակաս:

Երեք ամիսների պլանը կազմել է 5,238,661.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4,194,816.67 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 1,043,844.33 հազ. դրամի նվազեցում 19.9%-ի չափով: 1-ին եռամսյակի դրամարկղային ծախսը կազմել է 2,561,528.32 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 1,633,288.35 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 61.06 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 3,908,734.42 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 1,347,206.1 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը (կատարողականը) ճշտված պլանի նկատմամբ կկազմի 93.18 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 2,014,378.99 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 848,568.77 հազ. դրամ:

Այսպիսով ընդհանուր առմամբ նախարարության 3, 6 և 9 ամիսների հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ: Նշված ժամանակաշրջանների ընթացիկ եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան Նախարարությունը երեք, վեց և ինն ամիսների մասով հաշվեքննության եզրակացությունների մասով տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2021 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

Նախարարության 3, 6 և 9 ամիսների հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին նաև ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ, մասնավորապես՝

- Առաջին եռամսյակում դրամարկղային ծախսի կատարման տոկոսը առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել էր 61.06 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.18 տոկոս:

- Վեց ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը վեց ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 74.9 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.64 տոկոս:

- Ինն ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 80.7 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել 90.74 տոկոս:

Իսկ 2021 թվականի տարեկան դրամարկղային ծախսի կատարման տոկոսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 84.7%, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 88.6%:

Վերլուծելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ չնայած ըստ եռամսյակների համամասնությունների հաստատված պլանների նկատմամբ ճշտված պլանների նվազեցումների, տարվա արդյունքներով առկա է դրամարկղային ծախսերի կատարման ավելի բարձր ցուցանիշ /84.7%/, քան նախորդ եռամսյակներում, իսկ փաստացի ծախսի մասով՝ ավելի ցածր ցուցանիշ՝ 88.6%:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների վերաբերյալ նկատառումները ներկայացված է կից ներկայացվող թիվ 1 հավելվածով:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 3, 6 և 9 ամիսների մասով հաշվեքննությունների արձանագրություններում և ընթացիկ եզրակացություններում արտացոլվել են Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երեք, վեց և ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների, հաշվետվությունների հավելված 11.1-ում արտացոլված ոչ ֆինանսական ցուցանիշների թերի պլանավորման դեպքեր, որոնք տարեկան արդյունքներով մասամբ ճշտվել են, սակայն նշված հաշվետվության տարեկան ցուցանիշներում դեռևս առկա են թերի պլանավորման դեպքեր, ինչը բերել է հաշվետվություններում փաստացի ոչ ֆինանսական ցուցանիշների մասնակի խեղաթյուրված արտացոլմանը: Մասնավորապես.

- **1141-11018 - Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների պրամադորում** - Տարեկան պլանը կազմել է 291,187.8 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 239,727.8 հազ. դրամ, նվազել է 51,460.0 հազ. դրամով կամ 17.7%-ով: Նվազեցումները կատարվել է ՀՀ կառ. 03.03.2021թ. թիվ 267-Ն և 29.07.2021թ. թիվ 1247-Ն որոշումներով: Համաձայն հաշվետվություն ձև 2-ի դրամարկղային և

փաստացի ծախսը կազմել է 186,933.31 հազ. դրամ, դրամարկղային ծախսի և փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 77.98%: Ընդ որում դրամարկղային ծախսի կատարողականը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 73%, փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կազմել է 85.6 %: ՀՀ ֆինանսների նախարարության «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան պլանը կազմել է 3277, ճշտված պլանը՝ 3277, փաստացին կազմել է 3100, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների թիվը պլանավորվել է 6, ճշտված պլանը՝ 6, փաստացին կազմել է 23: Ընդ որում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների փաստացի թիվը ինն ամիսների և վեց ամիսների համար նույնպես կազմել էր 23, ճշտված պլանը՝ 6, առաջին եռամսյակի փաստացին կազմել է 15, ճշտված պլանը՝ 6: Հաշվի առնելով վերը նշվածը տարեկան պլանում, ինչպես նաև վեց և ինն ամիսների ճշտված պլաններում պետք է կատարվեր համապատասխան փոփոխություններ, որը չի արվել: Արդյունքում կարելի է փաստել, որ ոչ ֆինանսական ցուցանիշների թերի պլանավորում է իրականացվել: Նշվածը արձանագրված է նաև ինն, վեց և երեք ամիսների բյուջեի կատարողականների հաշվեքննությունների արձանագրություններում և ընթացիկ եզրակացություններում: Այսպես՝ ինն ամիսների համար շահառուների ընդհանուր քանակը պլանավորվել էր 2457.75 (տարեկան պլանը կազմել է 3277), որից նշվել է աղջիկ՝ 2326, տղա՝ 1551, (ընդհամենը՝ 3877), այսինքն ինն ամիսների պլանավորված ընդհանուր թվի (այդ թվում տղա և աղջիկ) 2457.75 և տղա և աղջիկների առանձին պլանավորված թվերի՝ 3877 միջև առկա է շեղում: Ինն ամիսների փաստացին կազմել է 1794, որից աղջիկ 851, տղա 943, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների փաստացի թիվը՝ 23, ճշտված պլանը՝ 6: Արդյունքում թերի պլանավորում է իրականացվել: 1-ին կիսամյակի համար շահառուների ընդհանուր քանակը պլանավորվել է 1638, որից նշվել է աղջիկ՝ 2326, տղա՝ 1551.5 /ընդհամենը 3877/, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների պլանը կազմել է 6, փաստացին՝ 15: Վերը նշված արդյունքային ցուցանիշներում երեք, վեց և ինն ամիսների համար պլանավորված համապատասխանաբար 819.25, 1638 և 2457.75 շահառուների թվաքանակները թերի է պլանավորվել, քանի որ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն ինն ամիսների, վեց ամիսների, ինչպես նաև երեք ամիսների պլանները պետք է համընկնեն տարեկան պլանին՝ 3277, մինչդեռ շահառուների թվաքանակի

պլանավորումները ըստ եռամսյակների իրականացվել է աճողական կարգով՝ յուրաքանչյուր եռամսյակ ավելացվել է 819.25-ով: Միևնույն ժամանակ նշենք, որ երեք ամիսների 819.25 շահառուների թվի պլանավորման պայմաններում փաստացի սպասարկվել է 1828 շահառու, վեց ամիսների համար 1638 շահառուների թվի պլանավորման պայմաններում փաստացի սպասարկվել է 2936 շահառու, ինն ամիսների համար 2457.75 շահառուների թվի պլանավորման պայմաններում փաստացին կազմել է 1794 շահառու: Հարկ է նշել, որ աղջիկ և տղա շահառուների պլանավորման թվերը չի բխում ոչ տարեկան պլանավորումից, ոչ էլ երեք, վեց և ինն ամիսների պլանավորման ընդհանուր թվերից՝ առկա է շեղում: Նշված խնդիրների հետ կապված արձանագրվել է նաև 1-ին եռամսյակի, 1-ին կիսամյակի և ինն ամիսների պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արձանագրություններում և ընթացիկ եզրակացություններում, սակայն որևէ ուղղումներ այդ մասով չեն կատարվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-11018 միջոցառման վերաբերյալ

2021 թվականի ֆինանսական հայրով պլանավորվել է ծառայություններ տրամադրել 6 կենտրոններում, սակայն պետության որդեգրած քաղաքականության համաձայն՝ երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքն ապահովելու նկատառումներից ելնելով, դրամաշնորհային մրցույթներ են հայտարարվել հանրապետության բոլոր մարզերում: Արդյունքում ցերեկային ծառայությունների աշխարհագրությունն ընդլայնվել է՝ ընդգրկելով հանրապետության բոլոր մարզերը, ծառայությունները կազմակերպվել են 23 կենտրոններում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Կարելի է փաստել, որ հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է ոչ ֆինանսական ցուցանիշների թերի պլանավորման մասով արձանագրված խնդիրները, ներկայացվել է միայն ծառայությունների մատուցման պլանային թվով 6 կենտրոնների փոխարեն թվով 23-ում փաստացի իրականացնելու հանգամանքները, որը արտացոլված է եղել նաև հաշվեքննության արձանագրությանը կից թիվ 3 հավելվածում, ինչպես նաև արտացոլված է նաև տվյալ ընթացիկ եզրակացությանը կից հավելվածում:

• **1153-11001 - Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հեղափոխությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում**- Տարեկան և ճշտված պլանները կազմել են 104,285.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 104,080.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 102,608.4 հազ. դրամ, Դրամարկղային ծախսի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.8%: Համաձայն հաշվետվետվություն ձև 4-ի

դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 17,098.0 հազ. դրամ (01.02.2021թ.վերադարձվել է պետբյուջե), տարվա վերջի դրությամբ՝ 1,472.1 հազ. դրամ (համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար), կրեդիտորական պարտք տարեսկզբին և տարեվերջին՝ 0: Դրամարկղային ծախսի կատարողականը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 91.5%, կատարման տեմպը ավելացել է 8.3%-ով (99.8-91.5): Փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի 98.4% (102,608.4:104,285.9*100), ինն ամիսների կատարողականը կազմել է 93.9 %, կատարման տեմպը ավելացել է 4.5%-ով (98.4-93.9): Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն 2020 թվականի պետական բյուջեից առանց մրցույթի դրամաշնորհի ձևով իրավաբանական անձանց տրամադրվող հատկացումների շրջանակում դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո իրավաբանական անձը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Իսկ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով նախատեսված է որոշ հոդվածների գծով՝ պայմանավորված դեկտեմբեր ամսվա ցուցանիշներով, վերադարձնել պետբյուջե մինչև 2021թ. հունվարի 20-ը, մինչդեռ տարեսկզբի 17,098.0 հազ. դրամի դեբիտորական պարտքը վերադարձվել է պետբյուջե 01.02.2021թ.-ին՝ 10 օր ուշացումով: ՀՀ ֆինանսների նախարարության «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների հետազոտությունների մասով ոչ ֆինանսական ցուցանիշների տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել է 9 հետազոտություն, փաստացին՝ 9, հետազոտությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների թիվը՝ 95, փաստացին՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, փաստացին՝ 700: Ինն ամիսների, ինչպես նաև 1-ին կիսամյակի և 1-ին եռամսյակի պլանավորման թվերը նույնն են, ինչ որ տարեկանը, ինն ամիսների փաստացին կազմել է համապատասխանաբար՝ 9, 95, 374: Հարկ է նշել, որ «Սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման 2021 թ. ծրագիրն ու սեմինարների 2021թ. պլանը հաստատելու մասին» նախարարի թիվ 59-Ա/1 հրամանը տրվել է 2021 թ. մայիսի 7-ին, որի պատճառով 1-ին եռամսյակում վերապատրաստումներ չեն իրականացվել: Միևնույն ժամանակ

վերապատրաստվող աշխատողների ինն ամիսների, ինչպես նաև 1-ին կիսամյակի և 1-ին եռամյակի 700 թիվը թերի է պլանավորվել, հաշվի առնելով որ տարեկան պլանը նույնպես 700 է: Նույն խնդիրը արձանագրվել է նաև 1-ին եռամյակի, 1-ին կիսամյակի և ինն ամիսների համար կազմված արձանագրություններում, որն արտացոլված է նաև ընթացիկ եզրակացություններում, սակայն արդյունքային ցուցանիշներում ճշգրտումներ չեն իրամանացվել:

• **1153-11002 - Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ** - Տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել է 24,055.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 23,839.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 23,150.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.1%: Համաձայն հաշվետվետվություն ձև 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 4,175.0 հազ. դրամ (01.02.2021թ. վերադարձվել է պետբյուջե), տարվա վերջի դրությամբ՝ 688.7 հազ. դրամ (համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար), կրեդիտորական պարտք տարեսկզբին և տարեվերջին՝ 0: Դրամարկղային ծախսի կատարողականը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 96.9%, կատարման տեմպը ավելացել է 2.2%-ով (99.1-96.9): Փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի 96.2% $(23,150.9:24,055.6*100)$, ինն ամիսների կատարողականը կազմել է 85.8 %, կատարման տեմպը ավելացել է 10.4%-ով $(96.2-85.8)$: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն 2020 թվականի պետական բյուջեից առանց մրցույթի դրամաշնորհի ձևով իրավաբանական անձանց տրամադրվող հատկացումների շրջանակում դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո իրավաբանական անձը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Իսկ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով նախատեսված է որոշ հոդվածների գծով՝ պայմանավորված դեկտեմբեր ամսվա ցուցանիշներով, վերադարձնել պետբյուջե մինչև 2021թ. հունվարի 20-ը, մինչդեռ տարեսկզբի 4,175.0 հազ. դրամի դեբիտորական պարտքը վերադարձվել է պետբյուջե 01.02.2021թ.-ին՝ 10 օր ուշացումով: Համաձայն 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության (հավելված N11.1) սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել է 300, փաստացին՝ 300,

ինն ամիսների պլանը և ճշտված պլանը՝ 300, փաստացին կազմել է 179, 1-ին կիսամյակի պլանը և ճշտված պլանը՝ 300, փաստացին կազմել է 53, 1-ին եռամսյակի պլանը և ճշտված պլանը՝ 300, փաստացին 53: Սուպերվիզիան արդեն իսկ վերապատրաստված շահառուի խորհրդատվական ծառայությունների մատուցումն է: Ծրագրի թիրախում զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) և տարածքային կենտրոնների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՆՄԿՈՒՀ), հանրակրթական դպրոցների արդեն վերապատրաստված մասնագետներն են: Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել 140, փաստացին՝ 140, ինն ամիսների պլանը և ճշտված պլանը՝ 140, փաստացին՝ 101, առաջին կիսամյակի պլանը և ճշտված պլանը՝ 140, փաստացին՝ 24, 1-ին եռամսյակի պլանը և ճշտված պլանը կազմել է 140, փաստացին՝ 24, մշակված ուղեցույցների տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել է 2, փաստացին՝ 2, ինն ամիսների պլանը և ճշտված պլանը՝ 2, փաստացին՝ 2, 1-ին կիսամյակի պլանը և ճշտված պլանը՝ 2, փաստացին՝ 2, 1-ին եռամսյակի պլանը և ճշտված պլանը կազմել է 2, փաստացին՝ 2: Միևնույն ժամանակ համաձայն նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից նախարարություն ըստ ամիսների ներկայացված աշխատանքների հանձնման ընդունման ակտի և պայմանագրի կատարման մասին եզրակացության, 1-ին կիսամյակում սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների փաստացի թիվը կազմել է 142՝ հաշվետվությամբ նշված 53-ի փոխարեն, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների 1-ին կիսամյակի փաստացի թիվը կազմել է 35՝ հաշվետվությամբ նշված 24-ի փոխարեն, իսկ մշակված ուղեցույցների մասով 1-ին կիսամյակում փաստացին կազմել է 1՝ հաշվետվությամբ նշված 2-ի փոխարեն: Նշված խնդիրը արտացոլված է եղել նախարարության կողմից իրականացվող պետական բյուջեի 6 ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության արձանագրությունում և ընթացիկ եզրակացությունում, որը ճշտվել է ինն ամիսների և տարեկան ցուցանիշներում: Իսկ ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորման ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ նշված հաշվետվության մեջ սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների քանակի և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորումը չի համապատասխանում միջոցառման նշված բաղադրիչների բովանդակության տրամաբանությանը, մասնավորապես այդ մասով եռամսյակային և տարեկան սահմանված են նույն պլանային թվերը, մինչդեռ դրանք պետք է պլանավորվեր աճողական կարգով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները 1153-11001 և 1153-11002 միջոցառումների վերաբերյալ

ՀՀ պետական բյուջեի 2022 թ. հայտում հաշվի են առնվել 1153-11001 և 1153-11002 ծրագրերի վերաբերյալ հաշվեքննությամբ ներկայացված դիտարկումները և 2022 թ. ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորումն իրականացվել է աճողական կարգով:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է ներկայացված դիտարկումները և հաջորդիվ պլանավորման գործընթացներում հաշվի են առնվել:

- 1117-11003 - Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում-**

Տարեկան պլանը կազմել է 21,327.4 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 6,327.4, նվազել է 15,000.0 հազ. դրամով կամ 77.33%-ով, նվազեցումը կատարվել է ՀՀ կառավարության 02.09.2021թ. թիվ 1426-Ն որոշմամբ: Դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 3,964.4 հազ. դրամ, կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 62.75%: Ընդ որում ինն ամիսների հաշվետվություններում ինն ամիսների ճշտված պլանը կազմել էր 929.2 հազ. դրամ՝ տարեկան 6,327.4 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում, այսինքն 4-րդ եռամսյակի համար պլանավորվել է 5-ից ավելի անգամ ծախս՝ 5,398.2 հազ. դրամ (6,327.4-929.2), քան պլանավորվել էր կատարել նախորդ ինն ամիսների ընթացքում (ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 870.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,004.42 հազ. դրամ): Դրամարկղային ծախսի կատարողականը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.6 %, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կազմել է 108.1%, $(1,004.42:929.2*100)$: Համաձայն 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության (հավելված N11.1) հեռուստահաղորդումների տևողությունը տարեկան պլանավորվել է 750 րոպե, ինն ամիսներին՝ 750 րոպե, 1-ին կիսամյակում՝ 750 րոպե, 1-ին եռամսյակում՝ 750, փաստացին ինն ամիսներին՝ 0 րոպե, հեռուստահաղորդումների ամսական պարբերականությունը (տարեկան, ինն ամիսներ, 1-ին կիսամյակին և 1-ին եռամսյակին) պլանավորվել է 2 անգամ, փաստացին ինն ամիսների, 1-ին կիսամյակի և 1-ին եռամսյակին կազմել է 0, տպագիր նյութերի քանակը տարեկան պլանավորվել է 3500 հատ, ինն ամիսներին, 1-ին կիսամյակում և առաջին եռամսյակում՝ 3500 հատ, փաստացին տարեկան կազմել է 7000 հատ, ընդ որում ինն ամիսներին կազմել է 620, 1-ին կիսամյակում կազմել է 620: Լուսանկարչական ծառայությունների քանակը տարեկան

ալանավորվել է 1400 հատ, ինն ամիսներին, 1-ին կիսամյակում և առաջին եռամյակում՝ 1400, փաստացին տարեկան կազմել է 970, ինն ամիսներին նույնպես 970, առաջին կիսամյակում կազմել է 850: Նշված ալանավորման թվերը հիմք են տալիս փաստելու, որ հեռուստահաղորդումների տևողության և տպագիր նյութերի քանակի մասով եռամյակային և տարեկան ոչ ֆինանսական ցուցանիշների ալանավորումը ձևական բնույթ է կրել, մասնավորապես եռամյակային և տարեկան ալանավորման թվերը չէր կարող նույնը լինել, այն աճողական կարգով պետք է ավելանար: Ավելին՝ 2021 թվականի ինն ամիսների և տարեկան պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություններում (հավելված N11.1) տարեկան ալանային ֆինանսական ցուցանիշի էական նվազման պարագայում (տարեկան ալանը 21,327.4 հազ. դրամից նվազել է և կազմել է 6,327.4 հազ. դրամ) ոչ ֆինանսական ալանային ցուցանիշների փոփոխություններ չի կատարվել: Համաձայն նախարարության տեղեկատվության ի թիվս օնլայն լրատվամիջոցներով ակտիվ լուսաբանման՝ ԱՍՀՆ կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ նախարարության աշխատակիցները տասնյակ հարցազրույցներ են տվել Հանրային հեռուստընկերության, «Ազատություն» ռադիոկայանի, «Արմնյուզ» ՀԸ-ի լրատվական թողարկումների շրջանակում: Նախարարության աշխատակիցները մասնակցել են նաև տաղավարային հարցազրույցների՝ ՀՀ կառավարության «Հրապարակում» հաղորդման, Արմնյուզ ՀԸ-ի «Սպառողի իրավունքը», 1in.am-ի «Հոժ գիծ», Հ1-ի «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ», «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդումների շրջանակում: Մասնակցություն եղել է նաև հանրային թեմատիկ քննարկումների, այդ թվում՝ Հանրային ՀԸ-ի «Եկեք հասկանանք» հեռուստաքննարկման, «Մեդիակենտրոն» մամուլի ակումբի կողմից կազմակերպված հանրային քննարկման շրջանակում: ՀՀ Կառավարության կողմից պատրաստած իրազեկող հոլովակները տրամադրվել են մի շարք հեռուստաընկերությունների, որոնք ևս դրանք հեռարձակել են: Միջոցառումները ներկայացնելու նպատակով կազմակերպվել են նաև թեմատիկ ասուլիսներ Armenpress լրատվական գործակալությունում, որոնք լուսաբանվել են տարբեր հեռուստաընկերությունների կողմից:

- **1141-11010 - «Ընտանիքներին կանանց երեխաներին աջակցություն ծրագրի» «Թրաֆիքինգի և շահագործման սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» - 2021թ.-ի համար ալանավորվել է 36,860.1 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է՝ 24,140.2 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է ևս 24,140.2 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և**

կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական և դեբիտորական պարտքեր տարեսկզբին և տարեվերջին չի ունեցել: Շահառուների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածի պլանով կազմել է՝ Պլան՝ 8, փաստ՝ 13: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի տարեկան գումարի՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 65.5%: Ամփոփելով 2021թ.-ի ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը կարելի է փաստել որ՝ 1) ՀՀ 2021թ. պետական բյուջեով տարեսկզբին տարեկան պլանով նախատեսվել էր 40,210.1 հազ. դրամ գումար, որը համաձայն ՀՀ կառավարության 19.09.2021թ. N 1538 որոշմանը, փոփոխվել էր՝ նվազեցվել էր 3,350.0 հազ. դրամով, արդյունքում ճշտված պլանը կազմել էր 36,860.1 հազ. դրամ: 2) 2021թ.-ի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել էր 24,140.2 հազ. դրամ, հետևաբար ֆինանսավորման գումարի՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 65,5%, իսկ ծրագրի չկատարման մասը կազմել էր 12,719.9 հազ. դրամ: 3) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պլանով նախատեսված թվով 8 շահառուներին ծառայություն մատուցելու դիմաց փաստացի ծառայություն է մատուցվել թվով 13 շահառուներին, այն էլ 8 շահառուների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում: Այսինքն, կարելի է եզրահանգել որ միջոցառման ֆինանսական ցուցանիշների պլանավորման աշխատանքները իրականացվել են թերի:

Ամփոփելով վերոգրյալը առաջարկվել է միջոցառմամբ նախատեսված կացարանի պահպանման ծախսերի հիմնավորվածությունը վերանայել, մասնավորապես՝ «գույքի և սարքավորումների վարձակալություն» - 7,865.0 հազ. դրամ, «Համակարգչային ծառայություններ» (ZOOM-ի վարձ. դասընթացների համար) - 55.0հազ. դրամ, «Տեղեկատվական ծառայություններ» (տեղեկատվական նյութերի տպագրություն) - 1,210.0 հազ. դրամ, «Հագուստ և համազգեստ» (հագուստ շահառուների համար) - 2,860.0 հազ. դրամ և այլն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-11010 միջոցառման վերաբերյալ

«Ընտրանիքներին կանանց երեխաներին աջակցություն ծրագրի» «Թրաֆիքինգի և շահագործման սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր 40,210.1 հազ. դրամ՝ 8 անձի համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով: ՀՀ կառավարության 19.09.2021թ. թիվ 1538-Ն որոշմամբ բյուջեն նվազեցվել է կազմելով 36,860.1 դրամ, սակայն շահառուների թվաքանակը չի փոփոխվել: Առաջնորդվելով պետական բյուջեով սահմանված շահառուների թվաքանակով 2021 թվականին հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որի

ամփոփման արդյունքում հաղթող է ճանաչվել «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունը, սակայն վերջինիս կողմից 2021 թվականին փաստացի ծառայություններ է տրամադրվել 13 շահառուի: Համաձայն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության» մասին ՀՀ օրենքի՝ թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց համապատասխան աջակցություն է տրամադրվում նախանույնացման և նույնացման փուլերում: Փաստացի 2021 թվականին որպես թրաֆիքինգի զոհ աջակցությունների ողջ փաթեթը տրամադրվել է 8 անձի, իսկ մնացյալ 5 անձանց տրամադրվել է օրենքով նախատեսված նախանույնացման փուլում անձին հասանելի աջակցության տեսակները, որոնք իրենց ծավալով առավել սահմանափակ են և չեն ենթադրում այնքան ֆինանսական միջոցների իրացում, որքան նույնացման զոհերին տրամադրելու դեպքում:

Հիմք ընդունելով 2021 թվականի թվային ցուցանիշները՝ ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից 2022 թվականին պետական դրամաշնորհի հատկացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցութին սահմանվել է՝ «հաղթող ճանաչված մասնակցին տրամադրել դրամական հատկացում 13 շահառուի համապատասխան ծառայություններ տրամադրելու համար»: Մրցութային արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող է ճանաչվել «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունը, որի հետ կնքվել է ԴՏՊ-1141-11010/22 պայմանագիրը՝ 13 շահառուի համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Նախարարության կողմից ներկայացված բացատրությամբ փաստացի ընդունվել է արձանագրությունով ներկայացված անհամապատասխանությունը, քանի որ բացատրության 2-րդ պարբերությունից նշվում է, որ 2022 թվականին պետական դրամաշնորհի հատկացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցութին սահմանվել է՝ «հաղթող ճանաչված մասնակցին տրամադրել դրամական հատկացում 13 շահառուի համապատասխան ծառայություններ տրամադրելու համար»:

- **1141-11015 - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ**- 2021թ.-ի համար պլանավորվել է 13,336.8 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է՝ 12,225.3 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է ևս 12,225.3 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական և դեբիտորական պարտքեր տարեսկզբին և տարեվերջին չի ունեցել: Շահառուների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածի պլանով կազմել է՝ Պլան՝ 60, փաստ՝ 160: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը 9 ամիսների համար՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 91,7%:

Ամփոփելով 2021թ.-ի ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը կարելի է փաստել որ՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեով տարեսկզբին տարեկան պլանով նախատեսված 13,336.8 հազ. դրամ գումարի դիմաց ֆինանսավորումը կազմել էր 12,225.3 հազ. դրամ, հետևաբար ֆինանսավորման գումարի՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 91,7%, իսկ ծրագրի չկատարման մասը կազմել էր 1,111.5 հազ. դրամ: Ուսումնասիրությամբ պարզվեց որ ծրագրի շրջանակներում կնքվել էր թվով 2 պայմանագիր յուրաքանչյուրը 60 շահառուների համար, այսինքն, ծրագրի շրջանակում պլանային թիվը պետք է կազմեր 120 շահառու, իսկ Նախարարության կողմից արդյունքային ցուցանիշներով պլանային թիվը ներկայացվել էր 60 շահառու: Հաշվի առնելով այն հանգամանքը որ պլանով նախատեսված թվով 60 շահառուներին ծառայություն մատուցելու դիմաց փաստացի ծառայություն է մատուցվել թվով 160 շահառուներին, այն էլ 60 շահառուների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում: Այսինքն, կարելի է եզրահանգել որ միջոցառման ֆինանսական ցուցանիշների պլանավորման աշխատանքները իրականացվել են թերի:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-11015 միջոցառման վերաբերյալ

«Ընդանիքներին կանանց երեխաներին աջակցություն ծրագրի» «Ընդանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր 13.336.8 հազ. դրամ՝ 60 ընդանեկան բռնության ենթարկված անձի ծառայություններ մատուցելու նպատակով: Առաջնորդվելով պետական բյուջեով սահմանված շահառուների թվաքանակով՝ 2021 թվականին հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որտեղ ևս սահմանվել է՝ «հաղթող ճանաչված մասնակցին տրամադրել դրամական հատկացում 60 շահառուի համապատասխան ծառայություններ տրամադրելու համար»:

Մրցութային արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող է ճանաչվել «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի կողմից ներկայացված ծրագրային առաջարկում կազմակերպությունը նախատեսել էր դրամաշնորհի հատկացման դեպքում ապաստարանի ծառայություններ տրամադրել 120 ընդանեկան բռնության ենթարկված անձանց, անհրաժեշտության դեպքում նաև նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին:

Հիմք ընդունելով կազմակերպության կողմից ներկայացված ծրագրային առաջարկը՝ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի և ՀՀ ԱՍՀ նախարարության միջև կնքվել են ԴՏՊ-1141-11015/21 ԿԱԵ և ԴՏՊ-1141-11015/21ԿԱՀՏ պայմանագրերը 120

շահառուի ծառայություններ մատուցելու նպատակով (յուրաքանչյուր պայմանագրով 60):

Արդյունքում՝ 2021 թվականին պետական բյուջեով սահմանվել է ծառայություններ մատուցել 60 շահառուի, հաղթող ճանաչված կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, որով սահմանվել է ծառայություններ մատուցել 120 շահառուի, փաստացի ծառայություններ է տրամադրվել 160 շահառուի:

Անդրադառնալով միևնույն ֆինանսական միջոցների շրջանակում նախատեսված և փաստացի ծառայություններ ստացած շահառուների թվային տարբերությանը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը գործում է ՀՀ ԱՍՀ նախարարության համաֆինանսավորմամբ և նախարարության կողմից հատկացված ֆինանսական միջոցները կազմակերպության կողմից բաշխվում են միայն աշխատակիցների աշխատավարձերի վճարման համար, իսկ շահառուների հետ կապված ծախսերը կազմակերպությունը հոգում է այլ ֆինանսական աղբյուրներից ստացված հատկացումների արդյունքում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Նախարարության կողմից ներկայացված բացատրությունով հավաստիացվում է արձանագրությունով ներկայացված անհամապատասխանությունը, մասնավորապես, բացատրության 3-րդ պարբերության «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի և ՀՀ ԱՍՀ նախարարության միջև կնքվել են ԴՏՊ-1141-11015/21ԿԱԵ և ԴՏՊ-1141-11015/21ԿԱՀՏ պայմանագրերը 120 շահառուներին ծառայություններ մատուցելու նպատակով (յուրաքանչյուր պայմանագրով 60):

• **1141-12001 - Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում** - 2021թ. տարեկան պլանով և ճշտված պլանով նախատեսվել է 6,372.0 հազ.դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է՝ 2,444.0 հազ.դրամ: Հաշվի առնելով ձև-2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ կատարողականը կկազմի 38.4%, կամ ճշտված պլանի նկատմամբ չի ծախսվել 3,928.0 հազ. դրամ: Ընդ որում 9 ամիսների հաշվետվության ձև2-ում նշված փաստացի ծախսի կատարման տոկոսը՝ 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 38.0 %, կատարման տեմպը աճել է 0.4 %-ով: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ տարեկան կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 38.4 %, ընդորում 9 ամիսներ կատարման տոկոսը կազմել է 32.4 %, կատարման տեմպը ավելացել է 6.0 %-ով: Հարկ է նշել, որ համաձայն նախարարության կողմից ներկայացված հաշվետվության՝ 2021թ.

տարեկան շահառուների պլանային միջին թիվը նախատեսվել է՝ 250 շահառու և փաստացի ծրագրից օգտվել է 290 շահառու: Սակայն, հաշվեքննության արդյունքում արձանագրվեց փաստացի 76 շահառուի մասնակցություն՝ այդ թվում՝ «Մարի Իզմիրյան»-23 շահառու, «Գավառ»-53 շահառու: Նախարարության կողմից շահառուների հաշվառումը տարվում է ոչ ճիշտ: Բացի այդ, տարեկան պլանային թիվը անհամեմատ ուռճացված է: Այսպես, եթե հաշվարկենք փաստացի շահառուների թվաքանակով և ՀՀ կառավարության 05.08.2004թ. թիվ 1324-Ն որոշման 8-րդ չափորոշիչով սահմանված առավելագույն վճարման գումարով՝ 3000 դրամ, ապա տարեկան պլանային թիվը չի գերազանցում 2,736.0 հազ.դրամը ($76 \cdot 3000 \cdot 12$): Մինչդեռ տարեկան պլանում նախատեսված է 6,372.0 հազ.դրամ: Արդյունքում, ծրագիրը իրականացվել է ամբողջությամբ, սակայն պլանավորման ոչ արժանահավատ լինելու պարագայում փաստացի կատարողականը կազմել է 38.4%:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1141-12001 միջոցառման վերաբերյալ

Առաջնորդվելով 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն որոշման հավելվածի 8-րդ չափորոշիչի 16-րդ կետով՝ 2021 թվականի ֆինանսական հայրի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող՝ դպրոցում սովորող երեխաների թիվ» տողով նախատեսվել է 250 երեխա: Նախարարության կողմից նախատեսվել է բոլոր երթևեկ երեխաներին, անկախ զարգացման առանձնահատկություններից, ընդգրկել որպես միջոցառման շահառուներ, որի արդյունքում «Գումարի փնտրման հմտություններ ունեցող երեխաների թիվ» տողով երեխաների թիվը սահմանվել է 202 երեխա:

Սակայն շուրջօրյա խնամքի կենտրոնները նպատակահարմար չգտնելով՝ մտավոր ոչ բավարար ունակություններով երեխաների տվյալները չեն ներկայացրել որպես միջոցառման շահառու, որի արդյունքում անձնական մանր ծախսերի համար դրամի փնտրման հմտություններ ունեցող սաների փաստացի թիվը գրանցվել է 94:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Բացատրությունը չի ընդունվում, քանի որ չի ներառում հաշվեքննության արձանագրությունում ներառված խնդիրների պարզաբանումը:

- **1015-12001 - Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում** - 2021թ-ի տարեկան պլանով նախատեսվել է 10,619,496.0 հազ. դրամ: ՀՀ կառ. 25.02.2021թ. N253-Ն որոշմամբ գումարը պակասեցվել է 10,440,162.0 հազ. դրամով և բաշխվել պետական մարմինների միջև՝ ճշտված պլանը սահմանելով 179,334.0 հազ. դրամ: 14.10.2021

թվականի թիվ 1696-ն որոշմամբ ճշտված պլանը նվազեցվել է 18,820.0 հազ. դրամով: Ճշտված պլանով նախատեսվել է 160,514.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի ֆինանսավորումը կազմել է 124,815.45 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 123,527.05 հազ. դրամ կամ 77.0%, առաջացնելով 1,288.4 հազ. դրամ դրամարկղի մնացորդ, իսկ ճշտված պլանի նկատմամբ չի ծախսվել 35,698.55 հազ. դրամ: Ընդ որում 9 ամիսների հաշվետվության ձև2-ում նշված փաստացի ծախսի կատարման տոկոսը՝ 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 79.6 %, կատարման տեմպը նվազել է 2.6 %-ով: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 77.0 %, ընդ որում 9 ամիսների կատարման տոկոսը կազմել է 69.9 %, կատարման տեմպը աճել է 7.1 %-ով: 2021թ. շահառուների պլանային միջին թիվը նախատեսվել է՝ 2002 մարդ, որի պարագայում տարեկան պլանը կազմում է 144,144.0 հազ. դրամ ($2002 \cdot 6000 \cdot 12$), մինչդեռ պլանավորվել է 160,514.0 հազ. դրամ: Ճիշտ պլանավորման պարագայում փաստացի կատարողականը կկազմեր 85.7% ($123,527.1 / 144,144.0 \cdot 100$): Փաստացի սպասարկվել է միջինը՝ 1716 շահառու:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը 1015-12001 միջոցառման վերաբերյալ

1015-12001 միջոցառման մասով 2021 թվականի գումարն՝ ըստ միջոցառման կատարողների բաշխելու արդյունքում (ՀՀ կառավարության 25.02.2021 N 253-Ն որոշում) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2021 թվականի 1-ին եռամսյակում 2,455 շահառուի, կիսամյակում 2,468 շահառուի, ինն ամսում 2,509 շահառուի, իսկ տարվա կտրվածքով 2,512 շահառուի մասով (շահառուները եռամսյակային կտրվածքով տարբերվել են, քանի որ նախատեսվել է, որ 1-ին եռամսյակում առկա 57 թափուր հաստիքը պետք է համալրվի մինչև տարեվերջ՝ 4-րդ եռամսյակում կազմելով 2,512 շահառու) ընդհանուր առմամբ նախատեսվել է տարեկան 179,334.0 հազ դրամ:

Մինչդեռ, ինչպես նշվել է նաև արձանագրության մեջ, ՀՀ կառավարության 14.10.2021 N 1696-Ն որոշմամբ նախարարության համար նախատեսված սոցիալաբեթի գումարները նվազեցվել են 18,820.0 հազ. դրամով, արդյունքում՝ սահմանելով 2002 շահառուի գծով 2021 թվականի տարվա ցուցանիշի համար 160,514.0 հազ դրամ: Նշված նվազեցման և կոնկրետ՝ 2021 թվականի տարվա ցուցանիշի համար 2002 շահառուի գծով 160,514.0 հազ դրամ հաշվարկը պայմանավորված է եղել հետևյալով.

2021 թվականի ապրիլի 1-ից ստեղծվել է (անվանափոխության միջոցով) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա մարմինը՝ միասնական սոցիալական ծառայությունը՝ սոցիալական պաշտպանության ոլորտի

բոլոր 4 մարմինների ներգրավմամբ, այն է՝ Սոցիալական ապահովության ծառայությունը, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության պետական գրասենյակները և մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալությունները և համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժինները:

Արդյունքում, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող անձինք նվազել են շուրջ 510-ով: Միաժամանակ, նշված կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ Միասնական սոցիալական ծառայության հաստիքացուցակում ավելացել է սոցիալաբեթի իրավունք տրվող շուրջ 1008 հաստիքային միավոր:

Տվյալ դեպքում, նշված 510 հաստիքով նախարարության հաստիքային միավորների թիվը կրճատելու արդյունքում աշխատանքից ազատվել են սոցիալական փաթեթի շահառուներ, որոնց դեպքում աշխատանքից ազատվելուց առաջ եղել են սոցիալաբեթի շահառուներ, ովքեր ունեցել են չմարված պարտավորություններ կամ կանխատեսվել է, որ կունենան և իրենց համար՝ համաձայն ՀՀ կառավարության 27.12.2012 N 1691-Ն որոշման N 1 հավելվածի՝ տվյալ պահին գործող կարգավորման 11-րդ կետի համաձայն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը միանվագ մարել է (կանխատեսել է, որ կմարի) վերջիններիս չմարված պարտավորությունները: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամսիների դրությամբ կանխատեսում է արվել, թե կոնկրետ որքան սոցիալաբեթի միջոցներ հարկավոր կլինեն այդ անցումային ժամանակահատվածում սոցիալաբեթի հարկացման կարգով նախատեսված ընթացակարգերի ապահովման համար: Ուստի, տվյալ դեպքում կոնկրետ 2002*6000*12 հաշվարկային բանաձևը կիրառելի չէր կարող լինել: Փոխարենը կատարվել է կոնկրետ հաշվարկ-կանխատեսում՝ պայմանավորված վերը նշված հանգամանքներով:

Հաշվեքննողի մեկնաբանությունը - Բացադրությունը չի ընդունվում, քանի որ չի ներկայացվել 2002 շահառուների համար՝ պլանային 160,514.0 հազ. դրամը հիմնավորող հաշվարկ-կանխատեսումը:

1160-11006 - Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ- 2021թ.տարեկան պլանով նախատեսվել է 87,524.7 հազ. դրամ: ՀՀ կառ.18.08.2021 թվականի N1365-ն որոշմամբ ծրագրային գումարը նվազեցվել է 14,500.0 հազ. դրամով: Ճշտված պլանով նախատեսվել է՝ 73,024.7 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 60,062.33 հազ. դրամ: Հաշվի առնելով ձև-2 հաշվետվության փաստացի ծախսի

գումարը՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ կատարողականը կազմել է 82.2% կամ ճշտված պլանի նկատմամբ չի ծախսվել 12,962.4 հազ. դրամ: Ընդորում 9 ամիսների հաշվետվության ձև2-ում նշված փաստացի ծախսի կատարման %-ը՝ 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.2 %, կատարման տեմպը նվազել է 11.0 %-ով: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ տարեկան կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 82.2 %, ընդորում 9 ամիսների կատարման %-ը կազմել է 80.8 %, կատարման տեմպը աճել է՝ 1.4 %: 2021թ. շահառուների պլանային միջին թիվը նախատեսվել է՝ 130 շահառու, փաստացի ծրագրից օգտվել են 151 շահառու: Ծրագիրը իրագործել են հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված՝ 1-ին փուլով. «Փրկություն» ԲՀ (լուտ-1) 50 շահառու՝ 30,858.0 հազ. դրամ, «Աստղացույք» ՀԿ (լուտ-3) 50 շահառու՝ 11,339.0 հազ. դրամ, «Աստղավարդ» ՀԿ (լուտ-4) 25 շահառու՝ 15,429.0 հազ. դրամ: Ընդամենը՝ 57,626.0 հազ.դրամ: 2-րդ փուլով՝ 05.02.2021թ. հայտարարված է մրցույթում՝ «Մայրի» ՀԿ (լուտ-2) 30 շահառու՝ 15,148.34 հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում՝ փաստացի կատարողականը՝ «Փրկություն» ԲՀ - 30,783.7 հազ. դրամ՝ 50 շահառու, «Աստղավարդ» ՀԿ - 14,794.7 հազ. դրամ՝ 24 շահառու, «Մայրի» ՀԿ - 14,483.93 հազ. դրամ՝ 27 շահառու: Ընդամենը՝ 60,062.3 հազ. դրամ՝ 101 շահառու: «Աստղացույք» ՀԿ-ն լուծել է պայմանագիրը և վերադարձրել փետրվար-մարտ ամիսների կատարողականներով ստացված 867.5 հազ. դրամը: Հաշվետվությամբ արձանագրված շահառուների թիվը՝ 151 շահառու, թերի է արտացոլված:

6.6 Ներքին աուդիտի վերաբերյալ

Ուսումնասիրվել է ներքին հսկողական գործընթացների, մասնավորապես ներքին աուդիտի գործառույթի իրականացումը նախարարությունում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 111-Ա/1 հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 153-Ա/1 հրամանով հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի նոյեմբերի 28-ի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և կոմիտեի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 111-Ա/1 հրամանի 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 223-Ա/1 հրամանով հաստատվել է «ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարության 2021-2023թթ. Ռազմավարական և 2021 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրերը»:

2021 թվականին Նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման թվով 4 հրավեր, որոնցից թվով 2-ի ժամանակ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած ոչ մի հայտ չներկայացվելու հիմքով (ժամանակագրորեն հաշված 1-ին և 3-րդ գնանշման հարցման հրավերների դեպքում), 2-րդ գնանշման հարցման հրավերը (հրապարակված 16.06.2021թ.) նույնպես հայտարարվել է չկայացած նախահաշվային գնի գերազանցման հիմքով, ընդ որում մրցույթին մասնակցել է միայն մեկ մասնակից՝ «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊ ընկերությունը, որի գնային առաջարկը եղել է 8,400.0 հազ. դրամ գումար, այն դեպքում, երբ Նախարարության գնումների պլանով (հրապարակված 04.06.2021թ.) գնման հայտի նախահաշվային գինը կազմել է 3,500.0 հազ. դրամ: 25.09.2021թ. հրապարակված գնանշման հարցման հրավերի արդյունքում գնային առաջարկ են ներկայացրել թվով 4 ընկերություն, որոնցից ամենացածր՝ 2,160.0 հազ. դրամ, ընթացակարգին նվազագույն գնային առաջարկով ընտրված մասնակից է համարվել «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), որի հետ 21.10.2021թ. կնքվել է «Պետության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագիր ԱՍՀՆ-ԳՀԾԶԲ-21/20-3», ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի կատարման ժամկետ է սահմանվել 21.10.2021թ.-24.12.2021թ., մատուցման ենթակա ծառայության գինը սահմանվել է 2,160.0 հազ. դրամ: Պայմանագրի արդյունքն պատվիրատուին հանձնվել է 24.12.2021թ. Ընկերության և Նախարարություն միջև կնքված թիվ 1 ակտով, վճարումը կատարվել 28.12.2021թ.-ին:

Համաձայն նշված պայմանագրի կից հավելված 1-ի բարձր ռիսկային է համարվել ներքին աուդիտի ենթակա հետևյալ միավորները՝

1. Խնամատար ընտանիքում երեխային խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում:
2. Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ (որդեգրման գործընթաց):
3. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած քաղաքացիների դիմում-բողոքներին տրված ընթացքի, խնդրի լուծում/մերժում, դիմում-բողոքների եղանակները, դրանց արդյունավետությունը, արձագանքի տևողությունը, ժամանակահատվածը, դրական կամ բացասական պատասխանը, լուծված կամ չլուծված լինելու խնդիրը և հետադարձ կապը քաղաքացու հետ:

4. Գնումների գործընթաց:

2021 թվականի ընթացքում Ընկերությունն իրականացրել և նախարարություն է ներկայացրել թվով 3 «Աուդիտորական վերջնական հաշվետվություն», որոնք վերաբերել են 2020 թվականի գործունեությանը, մասնավորապես նախարարություն է ներկայացվել՝

1. «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման և որդեգրման գործընթացի վերաբերյալ իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին» աուդիտորական վերջնական հաշվետվություն:

Նշված հաշվետվության մեջ ընդգրկվել է ԱՍՀՆ-ԳՀԾԶԲ-21/20-3 պայմանագրով նախատեսված 2 թեմաները՝ «Խնամատար ընտանիքում երեխային խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» և «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ (որդեգրման գործընթաց):»

Աուդիտի արդյունքում Ընկերության կողմից նախարարություն է ներկայացվել մի շարք դիտարկումներ և տրվել է եզրակացություն. այն է՝ «Հաշվի առնելով Միջոցառման և որդեգրման գործընթացի կատարման վերաբերյալ իրականացված ներքին աուդիտի ընթացքում ներկայացված դիտարկումները, գնահատելով ներդրված հսկողական համակարգի առկայության պարագայում՝ դրա կիրառելիության արդյունավետությունը, կարելի է հավաստել, որ աուդիտի ենթարկված միջոցառումը և որդեգրման գործընթացը հիմնականում կատարված են եղել պատշաճ, ժամանակին և արդյունավետորեն, միևնույն ժամանակ ներքին հսկողության գործընթացներում, ինչպես նաև ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացներում առկա են արդյունավետության բարձրացման լրացուցիչ գործիքակազմի ներդրման, ինչպես նաև ֆինանսական բաղադրիչի ճշգրիտ պլանավորման և ծախսման անհրաժեշտություն»: Հարկ է նշել, որ նշված միջոցառման մասով 2020 թվականի ճշտված պլանը կազմել է 168,893.3 հազ. ՀՀ դրամ, դրամարկղային ծախսը՝ է 126,920.07 հազ. դրամ, կատարողականը կազմել է 75.14 %:

2. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականին իրականացված գնումների գործընթացի ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ» աուդիտորական վերջնական հաշվետվություն:

Համաձայն աուդիտի վերջնական եզրակացության ընտրանքային կարգով դիտարկվել են Նախարարության 2020 թվականի կարիքների համար հայտարարված մի շարք գնման գործընթացների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև ընթացիկ գնումների փաստաթղթավորման գործընթացը, մասնավորապես՝

1. Գնումների պլանավորումը,
2. Գնման գործընթացի կազմակերպումը,
3. Պայմանագրի կնքումը, կատարումը և կառավարումը:

- Գնումների պլանավորման մասով իրականացվել է 2019-2020թթ.-ին աշխատակազմի պահպանման ծախսերի գծով գրասենյակային, կենցաղային և տրանսպորտային նյութերի մասով տարեկան հաստատված նախահաշիվների և դրամարկղային ծախսերի համեմատական վերլուծություն, համաձայն որի 2020թ. գրասենյակային նյութերի տարեկան նախահաշիվը կազմել է 9,100.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 5,462.06 հազ. դրամ, կատարողականը 60%, տրանսպորտային նյութերի տարեկան նախահաշիվը կազմել է 17,079.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 13,898.47 հազ. դրամ, կատարողականը՝ 81%, կենցաղային և հանրային սննդի նյութերի տարեկան նախահաշիվը կազմել է 560.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 292.05 հազ. դրամ, կատարողականը՝ 52%: Նշվել է, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կարիքի գնահատման, ինչպես նաև գնման առարկաների միավորի գների ճիշտ ձևավորման վրա:

- Գնման գործընթացի կազմակերպման մասով ուսումնասիրության է ենթարկվել Նախարարության կողմից 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայտարարված Անշարժ գույքի (ծածկագիրը՝ ԱՍՀՆ-ՀՄԱԱՊՁԲ-19/50-2), Հանդերձանքի և անկողնային պարագաների (ծածկագիրը՝ ԱՍՀՆ-ԳՀԱՊՁԲ-19/53-ՀԱՊ), Միկրոավտոբուսների (ծածկագիրը՝ ԱՍՀՆ-ԳՀԱՊՁԲ-19/54), Խոհանոցային սպասքի (ծածկագիրը՝ ԱՍՀՆ-ԳՀԱՊՁԲ-19/52-ԽՍ) և Համակարգչային տեխնիկայի (ծածկագիրը՝ ԱՍՀՆ-ԳՀԱՊՁԲ-19/54-ՀՏ) ձեռք բերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերը:

- Պայմանագրերի կնքման, կատարման և կառավարման մասով դիտարկվել է պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող եզրակացությունները պատասխանատու ստորաբաժանման կողմից ստորագրման իրավասության հարցերը, ինչպես նաև արձանագրվել է, որ գնումների պատասխանատու ստորաբաժանումների կողմից (հանձնման-ընդունման արձանագրություն, եզրակացություն և այլն) չեն ստորագրվում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, այլ ստորագրվում և ֆինանսավորման են ներկայացվում թղթային եղանակով:

Աուդիտի արդյունքում Ընկերության կողմից նախարարություն է ներկայացվել մի շարք դիտարկումներ և տրվել է եզրակացություն. այն է՝ «Գնումների գործընթացի ներքին աուդիտի իրականացման ընթացքում բացահայտված թերությունների և դիտարկումների համատեքստում կարելի է փաստել, որ գնման գործընթացի պլանավորման կազմակերպման, իրականացման, պայմանագրի կնքման,

կատարման և կառավարման գործընթացներում առկա են որոշակի ռիսկեր, որոնք կարող են բացասաբար ազդել կազմակերպվող գնման գործընթացների մրցակցայնության, տնտեսող գնումների իրականացման և որպես հետևանք գնումների օգտավետության արդյունավետության իրականացման վրա, սակայն ընդհանուր առմամբ գործընթացն իրականացվել է պատշաճ և ժամանակին, որով պայմանավորված Կազմակերպության ղեկավարը գործընթացի կազմակերպման և իրականացման համար պատասխանատվություններից ստացել է պատշաճ աշխատանք և անհրաժեշտ տեղեկատվություն»:

3. *«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած քաղաքացիների դիմում-բողոքներին տրված ընթացքի, խնդրի լուծում/մերժում, դիմում-բողոքների եղանակները, դրանց արդյունավետությունը, արձագանքի տրոհությունը, ժամանակահատվածը, դրական կամ բացասական պատասխանը, լուծված կամ չլուծված լինելու խնդիրը և հետադարձ կապը քաղաքացու հետ գործընթացը ներքին աուդիտի ենթարկելու վերաբերյալ արդյունքների մասին» աուդիտորական վերջնական եզրակացություն:*

Աուդիտորական խմբի կողմից ընտրանքային ուսումնասիրվել են աուդիտի ենթակա միավորին վերաբերող ենթակա ստորաբաժանումների կողմից օրենքով սահմանված կարգով իրենց գործունեության ընթացքում կազմված փաստաթղթերը, ինչպես նաև՝ գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրական ակտերին: Աուդիտի արդյունքում Ընկերության կողմից նախարարություն է ներկայացվել մի շարք դիտարկումներ և տրվել է եզրակացություն. այն է՝ *«Աուդիտի ենթակա միավորին վերաբերող գործընթացների ստուգման ընթացքում, չնայած քաղաքացու կողմից որոշակի թերությունների և դիտարկումների, ներքին հսկողական գործընթացների ու տարրերի կիրառման արդյունավետությունը գնահատելիս կարելի է հավաստել, որ պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների կողմից իրենց պարտականությունները կատարված են պատշաճ և ժամանակին, ներքին հսկողության գործընթացներն ու տարրերը, ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները գործել են արդյունավետ և հուսալի, որով պայմանավորված՝ ստորաբաժանումների ղեկավարների կողմից իրականացվել է պատշաճ որակի աշխատանք և հուսալի տեղեկատվություն»:*

Աուդիտի արդյունքներով ներկայացված թերությունները քննարկվել է ներքին աուդիտի կոմիտեի 27.12.2021թ. կայացած նիստում և ընդունվել է ի գիտություն, ինչպես նաև Ընկերության կողմից իրականացված ներքին աուդիտի արդյունքները գնահատվել են բավարար:

Հարկ է նշել, որ Ընկերությանը հանձնարարվել է աուդիտի ենթարկվել թվով 4 թեմա, որից նախարարության կողմից իրականացված բյուջետային ծրագրերի

մասով միայն թվով 1 միջոցառում: Ընդ որում 2020 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվել է թվով 78 միջոցառում, ընդհանուր 15,528,823.67 հազ. դրամ դրամարկղային ծախսով, մինչդեռ աուդիտի ենթարկված միջոցառման դրամարկղային ծախսը կազմել է 126,920.07 հազ. դրամ՝ նախարարության ընդհանուր դրամարկղային ծախսի 0.8%-ը:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 35753-21, դեկտեմբերի 3-ի թիվ ՄՆ/45863-2021 և 2022 թվականի մարտի 3-ի թիվ ՄՆ/5569-2022 գրություններով ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ 2021 թվականի բյուջեի համապատասխանաբար 3, 6 և 9 ամիսների կատարման արդյունքների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացություններում ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակված և հաստատված միջոցառումների ծրագրերը: Մասնավորապես՝

- Պետական բյուջեի երեք ամիսների կատարման արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունների մասով ներկայացված միջոցառումների ծրագրերի 6-րդ կետով (ՀՀ ԱՍՀ նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 35753-21 գրություն) սահմանվել է՝ «միջոցներ ձեռնարկել տարեկան և հաշվետու ժամանակաշրջանների ճշտված պլանների քանակային և արժեքային թերի պլանավորված ցուցանիշները ճշգրտելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ վերստուգել վեց, ինն ամիսների և տարեկան պլանային ցուցանիշների ճշգրտությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ճշգրտումներ», և նշվել է, որ համապատասխան ճշգրտումները կատարված են:
- Պետական բյուջեի վեց ամիսների կատարման արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունների մասով ներկայացված միջոցառումների ծրագրերի 5-րդ կետով (ՀՀ ԱՍՀ նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՄՆ/45863-221 գրություն) ներկայացվել է, որ 1153-11001 և 1153-11002 միջոցառումների մասով տեղեկացվել է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին համապատասխան ցուցանիշների անճշտությունների վերաբերյալ և միաժամանակ տեղեկացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատին, որ բյուջեի կատարման ինը ամիսների հաշվետվությունում ոչ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտված են, ինչպես նաև ճշգրտվել են ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի հայտում պլանային ցուցանիշների մեծությունները:

Պետական բյուջեի ինն ամիսների կատարման արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունների մասով ներկայացված միջոցառումների ծրագրերի 5-րդ կետով (ՀՀ ԱՍՀ նախարարի 2022 թվականի մարտի 3-ի թիվ ՄՆ/5569-2022 գրություն) ներկայացվել է, որ 1153-11001 և 1153-11002 միջոցառումների մասով տեղեկացվել է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին համապատասխան ցուցանիշների անճշտությունների վերաբերյալ և միաժամանակ տեղեկացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատին, որ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունում ոչ ֆինանսական հաշվետվությունները

ճշգրտված են, ինչպես նաև ճշգրտվել են ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի հայտում պլանային ցուցանիշների մեծությունները:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Միջոցներ ձեռնարկել նախարարության կողմից իրականացվող բյուջետային ծախսերի մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական սահմանելու ուղղությամբ՝ պետական բյուջեով հաստատված ցուցանիշների և ճշտված պլաններով սահմանված ցուցանիշների էական տարբերությունները հնարավորինս բացառելու նպատակով:

2. Առավել խստացնել նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների և/կամ պայմանագրային կողմերի նկատմամբ հսկողական գործընթացը՝ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ներկայացվող հայտերի/կատարողականների ու սահմանված հաշվետվությունների ժամանակին և ամբողջական ներկայացնելու նպատակով:

3. Միջոցներ ձեռնարկել սույն եզրակացությամբ նշված թվով 37 դեպքերում (ծրագրերով) ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները այսուհետ առավել նվազեցնելու ուղղությամբ՝ հնարավորինս բացառելով տարվա վերջին ամիսներին պլանային ցուցանիշների նվազեցման մեթոդիկան:

4. Նախարարությանը վերապահված մասով 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքում յուրաքանչյուր եռամսյակից անմիջապես հետո, ըստ ստացվող պաշտոնական տվյալների վերազնահատել մի շարք սոցիալական ծրագրերի հաշվարկային թվերում նախատեսված շահառուների քանակները՝ համապատասխանեցնելով դրանք ծրագրի շահառույի կարգավիճակ ստացած անձանց իրական քանակներին:

5. Գնման գործընթացները և դրանց նախորդող այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու «Գնումների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:

6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 223-Ա/1 հրամանով հաստատված «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի ծառայության 2021-2023

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022

թվականների ռազմավարական ծրագրի» կատարման շրջանակում, 2022 թվականին աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հայտարարման հայտին կից ներկայացվող տեխնիկական բնութագիրը կազմելիս հաշվի առնել ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում իրականացված ծրագրերի վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունները և/կամ խեղաթյուրումները՝ արդյունքում հնարավորինս ընդլայնելով ներքին աուդիտի ենթակա շրջանակը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ



Կարեն Կարապետյան

Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ (հազար դրամ)

Ծրագրային դասիչը		Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	9-ամիսների ճշտված պլան	9-ամիսների կատար. %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	9-ամիսների կատար. %-ը 9-ամիսների ճշտ. պլանի նկատմամբ	Տարեկան կատար. %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Փաստ. (դրամարկղային ծախս)	Պատճառները	Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ
Ծրագր.	Բյուջ.										
		Ծրագրի միջոցառումներ									
